ՀԱԿՈԲ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԱՆԱՆԴՅԱՆ
(1873—1952)

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հակոբ Համազասպի Մանանդյանը ծնվել է Ախալցխայում, 1873 թ. նոյեմբերի 22-ին։ Միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսում։ 1893—1897 թթ. ուսանել է Իենայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում և ավարտելով այն, պաշտպանել որպես դիսերտացիա իր անդրանիկ գիտական աշխատությունը՝ „Beiträge zur albanischen Geschichte" *խորագրով (հրատարակված է գերմաներեն լեզվով 1897 թ.) ու ստացել փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան։*

Գերմանիայից Հ. Մանանդյանն անցնում է Պետերբուրգ և սկսում պատրաստվել Պետերբուրգի Կայսերական համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում պետական քննություններ հանձնելուն։ Էքստերն կարգով ավարտելով այն 1898 թ., նա ստանում է առաջին աստիճանի դիպլոմ։

1900—1905 թթ. Հ. Մանանդյանը հին հունարեն և գերմաներեն լեզուներ, ինչպես նաև հին հունական գրականություն ու փիլիսոփայություն է ավանդում էջմիածնի ճեմարանում և պրպտումներ կատարում Մատենադարանում։ Հաջորդ երկու տարիները անց է կացնում Թիֆլիսում, ավանդելով գիմնազիայում գերմաներեն և հայերեն։ 1909 թ. Հ. Մանանդյանը ավարտում է, նորից էքստերն կարգով, Տարտուի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։

Բոլոր այս տարիները Հ. Մանանդյանի համար եղել են արգասավոր աշխատանքի մի ժամանակաշրջան հայ բանասիրության բնագավառում։ Հրաչյա Աճառյանի հետ միասին նա հրատարակում է «Հայոց նոր վկաները» ժողովածուն, որն ընդգրկում է XII—XIX դարերի հայ վկայաբանական գրականության քննական տեքստերը։ Նույն այդ տարիներին Հ. Մանանդյանը ձեռնամուխ է լինում հայ հունաբան դպրոցի գրական կոթողների հետազոտմանը, տալիս է երկու կարևոր տեքստերի գիտական հրատարակությունը և գրում այդ դպրոցի մի շարք երկերի վերաբերյալ ուսումնասիրություն։

Հաջողությամբ սկսված նրա գիտական գործունեությանը, սակայն, ամբողջ տասը տարվա ընդմիջում էր վիճակված։ Այդ ժամանակամիջոցը (10-ական թվականները) Հ. Մանանդյանը անց է կացնում Բաքվում, ստիպված լինելով մի կողմ դնել գիտական աշխատանքը ու կյանքի միջոցներ հայթայթել իրավաբանական աշխատանքով։ Զուգահեռաբար նա քաղաքատնտեսություն է ավանդում Բաքվի առևտրական ուսումնարանում։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո Հ. Մանանդյանը գալիս է Երևան և կրկին, այս անգամ՝ վերջնականապես, նվիրվում գիտական գործունեության։ Նա իր իսկ գործուն մասնակցությամբ 1921 թ. կազմակերպված Երևանի համալսարանի առաջին ռեկտորն է եղել։ Նույն այդ ժամանակվանից պատմագրական ֆակուլտետում սկսել է ավանդել հայ ժողովրդի պատմության դասընթացը։

Սկսվում է գիտնականի կյանքի ու գործունեության մի նոր շրջան։ Շարունակելով իր պրպտումները հայ բանասիրության ասպարեզում և ստեղծելով, մյուս աշխատությունների կողքին, փայլուն մենագրություն VI—VII դարերի հայ հունաբան դպրոցի մասին, Հ. Մանանդյանը 20—30-ական թվականներին ոտք է կոխում մի բնագավառ, որը նոր էր ոչ միայն իր համար, այլև ընդհանրապես գրեթե անմշակ էր. դա Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության բնագավառն էր։ Նրա հետաքրքիր հետազոտությունների շարքը ավարտվում է հայկական ֆեոդալիզմի մասին ընդհանրացնող մենագրության հրատարակությամբ։ Նույն ժամանակաշրջանում նա զբաղվում էր նաև պատմական օժանդակ գիտություններով՝ Հայաստանի պատմա-

կան աշխարհագրությամբ, պատմական մետրոլոգիայով, դրամագիտությամբ, հրատարակելով մի շարք աշխատություններ։

1926 թ. Հ. Մանանդյանը ստանում է պրոֆեսորի կոչում։ 1935 թվականից նա Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ էր։ 1938 թ. նրան տրվում է պատմական գիտությունների դոկտորի կոչում։

1939 թ. Հ. Մանանդյանը ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, 1943 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կազմակերպման ժամանակ նա հաստատվում է իսկական անդամների առաջին կազմում։

40-ական թվականները գիտնականի համար ստեղծագործական նոր թռիչքի տարիներ էին։ Նրա միտքը այժմ կենտրոնանում է Հայաստանի քաղաքական պատմության պրոբլեմների վրա. նա հրապարակում է Տիգրան II-ի ժամանակաշրջանին նվիրված իր հոյակապ մենագրությունը, որից հետո, զինված իր Ենցիկլոպեդիկ գիտելիքներով և նախորդ ուսումնասիրությունների արդյունքներով, ձեռնարկում է «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր աշխատության ստեղծմանը։

Մանանդյանի հետազոտական աշխատանքները զուգորդվում էին մանկավարժական աշխատանքի հետ։ Նրա մի շարք աշակերտները այժմ սովետահայ պատմագրության լավագույն ներկայացուցիչների թվին են պատկանում։ Նա մասնակցում էր նաև երկրի հասարակական կյանքին։ 1940 թվականին Մանանդյանը ընտրվել է աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի դեպուտատ, ելույթներ է ունեցել մի շարք ակտուալ հարցերի շուրջը։ Դեսպուբլիկայի կյանքում տեղի ունեցող իրադարձություններին նա արձագանքում էր իր աշխատություններով։ 1939 թ. «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի 1000-ամյակի նշման օրերին Հ. Մանանդյանը հանդես եկավ Հայաստանում արաբական տիրապետության դեմ տեղի ունեցած ապստամբությունների մասին զեկուցմամբ. Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակը նշեց իր «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը կուլտուրական ինքնության համար» աշխատությամբ։

1945 թ. Հ. Մանանդյանը պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։

1948 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում հանդիսավոր կերպով նշվեց Հ. Մանանդյանի ծննդյան 75-ամյակը։

Չնայած տարեց հասակին, պատմաբանը համառորեն շարունակում էր իր գիտա-հետազոտական աշխատանքները. մշակում էր «Քննական տեսությունը», պատրաստում հին Հայաստանի առևտրի և քաղաքների մասին իր մենագրության երկրորդ հրատարակությունը, ստեղծում բանասիրության, պատմական աշխարհագրության հարցերին նվիրված նոր գործեր։ Սակայն նա ոչ միայն դիմում էր այս՝ իրեն հարազատ ու սովոր բնագավառներին, այլև սկսել էր հետազոտություններ կատարել իր համար միանգամայն նոր՝ հունական վիմագրության ասպարեզում, գրելով աշխատություններ Արմավիրի և Գառնիի հունարեն արձանագրությունների մասին։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի կյանքի թելը կտրվեց այնպիսի մի պահի, երբ նա տակավին պահպանում էր իր ստեղծագործական եռանդն ու ավյունը և լի էր նոր մտադրություններով։

Գիտնականը մեռավ 1952 թ. փետրվարի 4-ին, յոթանասունինը տարեկան հասակում։ Նա հանգչում է Երևանի Պետական համալսարանի բակում։

Հ. Մանանդյանը մուտք է գործել գիտության ասպարեզ որպես բանասեր։ Այս բնագավառում նրա ստեղծագործության մեջ ամենանշանավոր տեղը պատկանում է հայ հունաբան դպրոցի ուսումնասիրությանը։ Իր ուշադրությունը այդ դպրոցի կոթողների վրա նա սևեռել էր գիտական գործունեության հենց սկզբից, և նրա հետաքրքրությունը դեպի այդ կոթողները չթուլացավ մինչև կյանքի վերջը։

Ինչպես հայտնի է, հայ գրերի գյուտը V դարի սկզբում ճանապարհ բաց արեց հայ գրականության հզոր մի հոսանքի առաջացման համար, որը դեռևս իր ակունքներում տվեց մեծաքանակ առաջնակարգ քերթվածքներ՝ պատմության, փիլիսոփայության, աստվածաբանության բնագավառներում՝ աչքի ընկնող ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև գեղարվեստական արժանիքներով ու լեզվով։ Ինքնուրույն գրականությունից բացի, գրաբար լեզվով առաջացավ նաև հարուստ թարգմանական գրականություն։ Հիմնականում դրանք հին հունական և բյուզանդական գրականության կոթողներն էին։ Թարգմանական գրականությունն էլ իր բովանդակությամբ բազմատեսակ էր. բայց գերակշռողը փիլիսոփայական թեմատիկան էր։ Ասպարեզ եկան Պլատոնի, Արիստոտելի, Զենոնի, Փիլոն Ալեքսանդրիացու, Դիոնիսիոս Թրակացու, Պորփյուրի և այլոց երկերի, ինչպես և դրանց բազմաթիվ մեկնությունների թարգմանությունները։

Այդ թարգմանությունները մեր օրերում անգնահատելի ծառայություն են մատուցում գիտությանը, որովհետև պահպանվել են այնպիսի գործեր, որոնց հունարեն բնագրերը չեն հասել մեզ։ Դրանց թվումն են, օրինակ, Զենոնի «Յաղագս բնութեան»-ը, Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» և ուրիշներ։ Մի շարք ուրիշ թարգմանություններ էլ, որոնց հունարեն բնագրերը պահպանվել են, մեծապես օգնում են արտագրությունների ու խմբագրությունների հետևանքով աղճատված բնագրերի ճշգրտմանը։ Այդ երկերից առանձնապես պետք է նշել Արիստոտելի «Ստորոգութիւնք»-ը և «Յաղագս մեկնութեան»-ը, որոնց հունարեն տեքստերը գրաբար թարգմանությունների հետ համեմատելիս պարզվում է, որ վերջինները շատ տեղերում ավելի լիարժեք են։

Իսկ միջնադարյան Հայաստանի հոգևոր կյանքում այդ գրականության դերը հսկայական է եղել։ Բավական է ասել, որ նա էր անտիկ կուլտուրայի և, հատկապես, փիլիսոփայության նվաճումների հաղորդիչը հայ ժողովրդին։ Թարգմանված գործերից մի քանիսը, ինչպես, օրինակ, Արիստոտելի աշխատությունները, Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը», «Գիրք պիտոյից»-ը Հայաստանում դպրոցական դասագրքերի դեր էին կատարում և ուժեղ ազդեցություն գործեցին հայերի տասնյակ սերունդների աշխարհայացքի կազմավորման վրա։

Զորեղ էր թարգմանական գրականության ազդեցությունը նաև հայոց լեզվի զարգացման վրա։ Լեզվի բնագավառը հունաբան դպրոցի թարգմանիչները վեր էին ածել յուրահատուկ փորձադաշտի, ուր հունարենի նորմաներն ու կանոնները հայոց լեզվին պատվաստելու փորձեր էին արվում։ Հիմնական ջանքերը ուղղված էին փիլիսոփայական տեքստերի թարգմանության ժամանակ ծառացող գլխավոր դժվարության հաղթահարման վրա, որը պայմանավորված էր համապատասխան հայերեն տերմինների բացակայությամբ։

Մեծ քանակությամբ նոր տերմիններ ստեղծվեցին հունարենից տառացի թարգմանության միջոցով, ըստ որում ոչ միշտ՝ հայերենի բառակազմության օրենքների պահպանման պայմաններում։ Որոշ թարգմանություններ արվել են նաև հայերեն տեքստում հունական շարահյուսության լրիվ պահպանմամբ կամ նրա ուժեղ ազդեցության տակ։ Կատարվել են հայոց լեզվի մեջ հունարենի առանձին ձևաբանական տարրերի ներմուծման փորձեր։ Հունաբան նորմուծությունները ձևաբանության բնագավառում, ինչպես նաև նրանց մեծագույն մասը շարահյուսության մեջ, հայոց լեզուն իր հետագա զարգացման ընթացքում թոթափեց իրենից, պահպանելով միայն հունաբան շրջանում ձեռք բերված բառային հարստության նշանակալի մասը։

Հայ հունաբան դպրոցի ուսումնասիրման իր աշխատանքը Հ. Մանանդյանը սկսեց մի կարևոր գրքի՝ Գրիգոր Նազիանցու Ճառերի Նոննոսին պատկանող մեկնությունների թարգմանության տեքստի հրատարակությամբ (Մարբուրգ, 1903)։ Իր «Քաղվածքներ Եվսեբիոս Կեսարացու քրոնիկոնից մի հին ձեռագրում» աշխատության մեջ (1905) Մանանդյանը առաջարկեց Ավգերյանի հրատարակած «Քրոնիկոնի» տեքստի մի շարք կարևոր ուղղումներ։ 1911 թվականին նա հրատարակեց մեկնիչ Էլիասին վերագրվող «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի»-ի տեքստը։ Հետագայում Մանանդյանը հրատարակել է նաև Թեոն Ալեքսադրիացու «Յա-

զուգս ճարտասանական կրթութեանց»-ի գրաբար թարգմանությունը՝ հունարեն բնագրին կից (1938), ինչպես և «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք»-ի գրաբար թարգմանությունը (հրատարակվել է նրա մահվանից հետո, 1956 թ.)։

Տեքստաբանական աշխատանքին զուգահեռ Հ. Մանանդյանը պատրաստում էր նաև ուսումնասիրություն հայ հունաբան դպրոցի մասին։ 1904 թ. նա հրատարակեց «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» մատենագրական հետազոտությունը, իսկ 1928 թ.՝ «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» մենագրությունը, որը հայ կլասիկ բանասիրության լավագույն նմուշներից է։

Այդ ուսումնասիրության առաջին բաժնում Հ. Մանանդյանը զբաղվում է թարգմանական մի շարք փիլիսոփայական երկերի հեղինակության հարցով, երկեր, որոնք ստրադիցիոն կերպով համարվում էին ուրույն հայկական և վերագրվում էին փիլիսոփա Դավիթ Անհաղթի գրչին։ Պարզելով մի քանի աշխատությունների հեղինակների անձնավորությունը, Հ. Մանանդյանը ցույց է տալիս, որ այդ երկերը գրված են տարբեր ժամանակ և զանազան փիլիսոփայական-կրոնական դիրքավորումներով։

Երկրորդ, առավել կարևոր բաժնում գրված է հունաբան դպրոցի գործունեության պարբերացման հարցը։ Այստեղ Հ. Մանանդյանը մի նոր քայլ է անում Ն. Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին և հայկական մեկնիչները» փայլուն աշխատությունից հետո հին հայկական թարգմանությունների ուսումնասիրման մեթոդիկայի և թվագրման մշակման գործում։ Իր հետազոտության ընթացքում նա հիմնվում է գերազանցորեն թարգմանությունների լեզվի համեմատության վրա, բայց աչքաթող չի անում նաև նրանց բովանդակության համագրումը։ Հունաբան հոսանքի թվագրման ու շրջանների որոշման համար Հ. Մանանդյանը գիտական շրջանառության մեջ է դրել մի շարք, մինչ այդ չօգտագործված, տեքստեր։ Նա եկավ այն համոզման, որ դպրոցի գործունեությունը ծավալվել է VI—VII դարերում և անցել է զարգացման երեք շրջան, որոնցից յուրաքանչյուրը տարբերվում է թարգմանության իր սկզբունքներով ինչպես շարահյուսության, այնպես էլ բառակազմության տեսակետից, ընդ որում նա բացահայտեց նաև վաղ շրջանների սկզբունքների ազդեցության արդյունքները ավելի ուշ շրջանների թարգմանությունների նորմաների վրա։ Հ. Մանանդյանի հետազոտությունները, Ն. Ադոնցի աշխատության հետ միասին, գիտական հողի վրա դրին և ուղղություն ցույց տվին հունաբան շրջանի գրականության ուսումնասիրությանը, որը դեռևս շատ չլուծված պրոբլեմներ ու խնդիրներ է հարուցում ինչպես բանասերի ու լեզվագետի, այնպես էլ պատմաբանի առջև։

Հ. Մանանդյանի բանասիրական գործունեության հետևյալ փուլը կապված է Մովսես Խորենացու կյանքի ու ստեղծագործության թվագրման պրոբլեմի հետ։ Այդ հարցում Մանանդյանը ընթանում էր այն հետազոտողների ուղիով, որոնք, մերժելով իրեն՝ Մովսես Խորենացու կողմից «Հայոց պատմության» մեջ այդ կապակցությամբ տրված տեղեկությունների իսկությունը, համարում էին նրան ոչ թե V դարի, այլ ավելի ուշ ժամանակաշրջանի՝ VII—VIII կամ IX դարի պատմիչ։ Իր «Մովսես Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատության մեջ (1943) Մանանդյանը հանգում է այն եզրակացության, որ Մովսես Խորենացու կյանքի ամենահավանական ժամանակն է IX դարը։ Հենց այդ ժամանակ է, հեղինակի կարծիքով, ստեղծվել «Աշխարհացույցը», որն ավանդաբար վերագրվում է Մովսես Խորենացուն և որը, ինչպես ջանում է ապացուցել Հ. Մանանդյանը, իսկապես նրա գրչին է պատկանում։ Բացի այդ, Մանանդյանի կարծիքով, Մովսես Խորենացու բառապաշարը պարունակում է բազմաթիվ, V դարից ավելի ուշ շրջանի ծագում ունեցող բառեր և, մասնավորապես, IX դարի մի շարք բառեր։

Անհրաժեշտ է, սակայն, ընդգծել, որ հետևելով թվագրման խնդրում գերբնագատորեն տրամադրված գիտնականներին, Հ. Մանանդյանը շատ հեռու է նրանցից «Հայոց պատմության», որպես պատմական աղբյուրի, արժեքավորման հարցում։ Դրանում կարելի է համոզվել թերթելով նրա պատմագիտական ուսումնասիրությունները, որոնցից համարյա թե ոչ մեկում չեն բացակայում Խորենացու տված տեղեկությունները, հաճախ հենակետ հանդիսանալով պատմաբանի համար հայ ժողովրդի պատմության ամենամութ ու կնճռոտ հարցերի լուսաբանման գործում։ «Հայոց պատմության» բովանդակությանը տրված Մանանդյանի բարձր գնահատականը արտացոլվել է նաև մահվանից հետո հրատարակված «Մար Աբասի «Հայաստանի սկզբնական պատմությունը» (Սեբեոսի, Մովսես Խորենացու և Պրոկոպիոս Կեսարացու աղբյուրների շուրջը)» հոդվածում։ Այստեղ Հ. Մանանդյանը պաշտպանում է այն տեսակետը, որ Խորենացին իր պատմության առանձին բաժինները շարադրելիս հիմք է ընդունել Մար Աբասի

խսկապես գոյություն ունեցած աշխատությունը և այդպիսով պահպանել է մեզ բնագրում չհասած Հայաստանի պատմության հին շրջանի կարևորագույն գրավոր աղբյուրի բովանդակությունը։

Որքան էլ նշանակալի է Հ. Մանանդյանի գործունեությունը հայ բանասիրության բնագավառում, այնուամենայնիվ, է՛լ ավելի բեղմնավոր ու բազմակողմանի է նրա պատմագիտական ստեղծագործությունը։ Նա հին Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության հարցերի մարքսիստական մշակման կարապետն էր և նրա քաղաքական պատմության խորը ուսումնասիրողը։ Բայց նախքան այդ մասին խոսելը, անհրաժեշտ է կանգ առնել գիտնականի ոչ պակաս կարևոր ուսումնասիրությունների վրա՝ պատմական օժանդակ գիտությունների և, առաջին հերթին, պատմական աշխարհագրության բնագավառում, որի ոգևորված հետազոտողը և փայլուն գիտակն էր Հ. Մանանդյանը։

Նրա հետազոտման հիմնական առարկան այստեղ հանդիսացավ այսպես կոչված Tabula Peutingeriana-ն, IV դարի աշխարհագրագետ Կաստորիոսին վերագրվող հռոմեական ճանապարհային քարտեզը, որի վրա տեղ է հատկացված նաև պատմական Հայաստանի տերիտորիային։ Այդ աղբյուրի օգտագործման հիմնական խոչընդոտն այն է, որ մեզ հասած ձեռագրերում արտագրությունների հետևանքով տեղանունները շատ աղավաղված վիճակում են գտնվում։ Անունները վերականգնելու, ինչպես և Հայաստանի քարտեզի վրա զետեղելու համար անհրաժեշտ էր կատարել բանասիրական մեծ աշխատանք։ Հ. Մանանդյանը ձեռնամուխ եղավ այդ գործին և նրա իրականացման համար մոբիլիզացրեց Հայաստանի պատմական տոպոնիմիկայի, ինչպես և արդի տոպոնիմիկայի աղբյուրները։

Այս թեմայով գրված նրա անդրանիկ աշխատությունը՝ «Հայաստանի հին ճանապարհները Artaxata-Satala և Artaxata — Tigranocerta ըստ Պեվտինգերյան քարտեզի» լույս տեսավ 1931 թ.։ Նույն այդ հարցերին է նվիրված «Պեվտինգերյան քարտեզի Hariza կայարանը» հոդվածը («Մանր հետազոտություններ» ժողովածուի մեջ, 1932)։ 1936 թ. Հ. Մանանդյանը հրատարակեց իր «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեվտինգերյան քարտեզի» մենագրությունը, որի մեջ մանրամասն ուսումնասիրված են Արտաշատից դեպի Սատաղ, Տիգրանակերտ, Սեբաստոպոլիս և Պարսկաստան տանող չորս ճանապարհները։ Հավելվածը նվիրված է Դվին-Պարտավ ճանապարհի հետազոտմանը։ Հեղինակի կարծիքով դրանք էին հռոմեա-պարթևական և բյուզանդա-պարսկական ժամանակի գլխավոր առևտրական և ռազմական ճանապարհները։ Հաշվի առնելով հանդերձ Պեվտինգերյան քարտեզի՝ որպես Հայաստանի պատմական աշխարհագրության կարևոր աղբյուրի, մեծ նշանակությունը, չի կարելի, այնուամենայնիվ, աչքաթող անել, որ Հ. Մանանդյանը որոշ չափով գերագնահատում էր այն, մի բան, որ արտահայտվել է մասնավորապես այդ քարտեզին Պտղոմեոսի «Աշխարհագրության» համեմատությամբ՝ նրա կողմից տրված նախապատվության մեջ։

Պատմական աշխարհագրության և մասնավորապես Հայաստանի առևտրական և ռազմական ճանապարհների հետ կապված հարցերը հետաքրքրել են Մանանդյանին հետագայում ևս. նա դիմեց Հայաստանի պատմության ավելի հին ժամանակաշրջանին և ստեղծեց մի քանի աշխատություններ՝ հիմնված ասուրական, խեթական, ուրարտական, հին-պարսկական, հին-հունական և հռոմեական աղբյուրների և ավելի ուշ շրջանի հայկական աղբյուրների տվյալների համեմատության վրա։ Այդպիսիների թվին են պատկանում Խալդիա, Ուրուատրի և Նաիրի երկրների տեղադրման հարցին, ասուրական արքաների կատարած ուրարտական արշավանքներին, կիմերների Անդրկովկաս ներխուժելու, 10 000 հույների նահանջի ուղիների և այլ հարցերին նվիրված հոդվածները։ Այդ հոդվածները ամփոփված են Հ. Մանանդյանի «Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին» (1944), «Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ» (1945), և «Հին Հայաստանի պատմության և աշխարհագրության մի քանի վիճելի պրոբլեմների մասին» (հետմահու հրատարակություն, 1956) ժողովածուներում։ Բացի այդ, նա հետազոտել է Պոմպեոսի անդրկովկասյան արշավանքների և բյուզանդական Հերակլ կայսեր պարսկական արշավանքների երթուղիները և այլն։

Պատմական աշխարհագրության խնդիրների ուսումնասիրությունից բացի, Հ. Մանանդյանը մեծ աշխատանք է կատարել նաև պատմական այլ օժանդակ գիտությունների, այն է՝ պատմական մետրոլոգիայի և, սրա կապակցությամբ, նաև դրամագիտության ասպարեզում։ Այստեղ նրա հիմնական աշխատությունն է «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» մենագրությունը (1930)։ Առաջին և երկրորդ բաժիններում հետազոտված են VII դարի հե-

գինակ Անանիա Շիրակացու «Ցաղագս չափուց և կշռից» աշխատության տվյալները և կազմված են աղյուսակներ, որոնք հին հայկական կշիռներն ու տարողության չափերը վեր են ածում ժամանակակից միավորների։ Երրորդ բաժնում մի շարք այլ աղբյուրների հիման վրա ուսումնասիրված են երկարության հին հայկական չափերը, և նույնպես վեր են ածված ժամանակակից միավորների։ Այդ բաժնին են առնչվում իրենց թեմայով նաև հետագայում գրված «Էրատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը» (1930) և «Միջօրեագծի և երկրի մակերեսի աստիճանական չափումները ըստ հին հայկական աղբյուրների» (1950) աշխատությունները։ Թվարկված գործերի նշանակությունը, որոնք դրված են Հայաստանի սահմանակից երկրներից ծագող լայն համեմատական նյութերի հիման վրա, դուրս է գալիս հայկական մետրոլոգիայի պատմության շրջանակից։ Նրանց մեջ գրված ու լուծված են հելլենիստական-հռոմեական-բյուզանդական, ինչպես նաև պարսկական մետրոլոգիայի մի շարք կարևոր հարցեր։

Ինչ չափով էլ խորանար Հ. Մանանդյանը պատմական օժանդակ գիտությունների ուսումնասիրման մեջ, նրանք, այնուամենայնիվ, իր համար ինքնանպատակ չէին։ Այդ տիպի ուսումնասիրություններում հայթայթված տվյալները իրենց հերթին նյութ էին դառնում ավելի լայն մասշտաբի, հայ ժողովրդի պատմական կյանքի այս կամ այն պրոբլեմին նվիրված աշխատությունների համար։ Նման ընդհանրացնող գործերից մեկն է «Հայաստանի քաղաքների և առևտրի մասին հին ժամանակների համաշխարհային առևտրի կապակցությամբ (5-րդ դ. մ. թ. ա.—15-րդ դ. մ. թ.)» գիրքը (1930)։

Ինչպես ցույց է տալիս վերնագիրը, գրքում ուսումնասիրված են տարանցիկ առևտուրը Հայաստանի վրայով և այդ առևտրի կենտրոնները՝ հայկական քաղաքները։ Հայ պատմագիտության մեջ առաջին աշխատությունն էր այդ՝ նվիրված քաղաքների պատմությանը։ Գրքում հավաքված ու մշակված փաստերի հարստության և մատենագիտական տեղեկությունների առատության շնորհիվ, այդ գիրքը մինչև այժմ մնում է և դեռ երկար ժամանակ կմնա իբրև անհրաժեշտ ձեռնարկ հայ ժողովրդի պատմությունը ուսումնասիրողի համար։ Դրանով էլ պայմանավորված էր նրա երկրորդ, հեղինակի կողմից վերամշակված ու լրացված հրատարակության իրականացումը 1954 թվականին։

«Հայաստանի առևտրի և քաղաքների մասին» աշխատությունը միավորված է մի որոշակի կոնցեպցիայով, որը հետևողականորեն արտացոլվում է գրքի բոլոր մասերում։ Ամբողջ աշխատության առանցքը այն միտքն է, որ Հայաստանի քաղաքների կյանքը լիովին կախված էր նրանց՝ միջազգային առևտրին մասնակցելու աստիճանից։ Հայկական քաղաքները, հեղինակի կարծիքով, զուտ առևտրական քաղաքներ էին և նրանց ծաղկումը միշտ հետևանք էր լինում տարանցիկ ճանապարհների վրա առևտրի աշխուժացման և, ընդհակառակը, քաղաքների անկման պատճառը՝ միմիայն առևտրի թուլացումը կամ դադարումն էր այդ ուղիների վրա։ Իհարկե, շատ արժեքավոր է այն, որ Հ. Մանանդյանը այդչափ մեծ նշանակություն է տալիս քաղաքների զարգացման այնպիսի կարևոր գործոնին, որպիսին է տարանցիկ առևտուրը։ Բայց այս արտաքին գործոնի հետ մեկտեղ անհրաժեշտ էր հաշվի առնել նաև կարևորագույն ներքին գործոնը՝ հայկական հասարակության սոցիալ-տնտեսական զարգացումը։ Ցավոք սրտի Հ. Մանանդյանը փորձ չի արել կապակցելու քաղաքների զարգացման իր կոնցեպցիան հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական պատմության հետ, պատմություն, որի պրոբլեմների վրա նա նույն այդ տարիներին խոր և արդյունավետ աշխատանք էր տանում։

Դառնանք այժմ Մանանդյան-պատմաբանի ստեղծագործության այդ կարևորագույն կողմին։ Այն ըստ արժանվույն գնահատելու և նրա տեղը Մանանդյանի ստեղծագործական կենսագրության մեջ պատկերացնելու համար պետք է մտաբերել, որ գիտնականը սոցիալ-տնտեսական պրոբլեմների մշակմամբ սկսեց զբաղվել բավական ուշ՝ 20-ական թվականների սկզբին, երբ նա արդեն վաղուց կազմավորված բանասիրական պրոֆիլի հետազոտող էր։ Դարձը դեպի հիշյալ պրոբլեմները, հետևաբար, նրա ստեղծագործության մեջ բեկման մի կետ էր՝ սերտ կապված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և իրեն՝ Մանանդյանի գործունեության՝ Սովետական Հայաստանի կյանքի մեջ ներարկվելու հետ։ Կարելի է պնդել, որ այլ պայմաններում հիշյալ պրոբլեմները խորթ կմնային նրան։

Հայաստանի պատմության սոցիալ-տնտեսական պրոբլեմներին նվիրված աշխատությունների շարքում առաջինը նրա «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարդպանության շրջանում» մեծարժեք աշխատությունն էր (1925)։ Ներածական մասում Հ. Մանանդյանը նշում է, որ «...նախկին երկերում (Հայաստանի պատմությանը նվիր-

ված—Գ. Ս.) մատնանշված են ժամանակագրական կարգով հայոց անցյալի փոքրիշատե ստուգված քաղաքական ու կրոնական անցքերը և միանգամայն աչքաթող է արված հին Հայաստանի ներքին կյանքը՝ պետական, ընկերական և տնտեսական»։ Մանանդյանը կարող էր այն ժամանակ հիշատակել միայն երկու գիրք, որոնք այս կամ այն չափով շոշափում էին հիշյալ հարցերը. Ն. Ադոնցի «Հայաստանը Յուստինիանոսի ժամանակաշրջանում» (ՍՊԲ, 1908) և Ի. Ջավախովի «Հին Վրաստանի և հին Հայաստանի պետական կարգը» (ՍՊԲ, 1903) աշխատությունները։ Սակայն, կավելացնենք մենք, այդ աշխատություններում, թեև նրանցից առաջինը հայ պատմագիտության գագաթնակետերից մեկն է, շոշափված են Հայաստանի ներքին կյանքի միմիայն քաղաքական ու իրավական կողմերը, բայց ո՛չ սոցիալական ու տընտեսական։

Իսկ Հ. Մանանդյանը ձեռնամուխ եղավ հենց սոցիալ-տնտեսական պրոբլեմների ուսումնասիրմանը, լրիվ հաշիվ տալով իրեն դրած դժվարության մասին։ Բացի այդ բնագավառի անմշակ վիճակից, դժվարությունը նաև հին Հայաստանի պատմության աղբյուրների բնույթի մեջ էր, որովհետև դրանք գրեթե միայն քաղաքական պատմությունն է, որ լուսաբանում են։ «Եթե երբեմն և պատահում են նրանց մեջ աղոտ ակնարկներ երկրի ու ժողովրդի ներքին կացության մասին,— գրում է Հ. Մանանդյանը,—միջանկյալ այդ վկայությունները այնքան մութ են ու անորոշ, որ կարոտ են քննության ու լուսաբանության հատուկ ուսումնասիրությունների միջոցով, իսկ առանց այդ չեն կարող նյութ ծառայել պատմական ընդհանրացումների»։ Այդ «մութ ու անորոշ» ակնարկների հատուկ ուսումնասիրության խնդիրն էր, որ վերցրեց իր վրա Հ. Մանանդյանը։

Առաջին իսկ աշխատության մեջ նա դրեց մի նոր պրոբլեմ՝ հին Հայաստանի նյութական բարիքներ արտադրողների դրության հարցը։

Սույն պրոբլեմի շոշափման փաստը արդեն վկայում է, որ այդ տարիներին Հ. Մանանդյանը կրել է մարքսիզմի պատմական մատերիալիզմի տեսության ուժեղ ազդեցությունը։

«Դիտողություններին» հաջորդեցին «Հայաստանի պետական հարկերը մարզպանության շրջանում» հոդվածը (1926), «Նյութեր հին Հայաստանի տնտեսական պատմության» աշխատության առաջին (1927) և երկրորդ (1928) պրակները, «Դիտողություններ պարթևների և Արշակունյաց Հայաստանի ֆեոդի և ֆեոդալական գործի մասին» հոդվածը (1932)։

Բոլոր այս հետազոտությունների հիմքի վրա Հ. Մանանդյանը ստեղծեց մի ընդհանրացնող մենագրություն՝ նվիրված հին Հայաստանի հասարակարգի պրոբլեմին։ Այդ մենագրությունը հրատարակվեց 1934 թ. «Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան)» վերնագրի տակ։ Այստեղ հեղինակը կատարում է հայկական ֆեոդալիզմի համակողմանի ուսումնասիրությունը։ Նրա ընդհանուր սխեման իր գլխավոր գծերով նման է հայկական ֆեոդալիզմի՝ Ն. Ադոնցի կողմից առաջադրած կոնցեպցիային, մի բան, որ շեշտում է ինքը Մանանդյանը իր գրքի ներածականում. «Որ հին Հայաստանի նախարարական կազմակերպությունը համապատասխանում էր իր էությամբ Արևմտյան Եվրոպայի ֆեոդալիզմին, այդ ապացուցել է Ադոնցը վերոհիշյալ իր աշխատության մեջ։ Իմ ուսումնասիրության մեջ ցույց է տրված նաև, որ ֆեոդալական այդ կազմակերպությունների նմանությունները շատ ավելի մոտ են եղել և սերտ, քան մինչև այժմ ենթադրել են»։

Գրքում մանրամասն վերլուծված է նախարարական տերությունների ներքին կազմակերպությունը և կառուցվածքը, ինչպես նաև նախարարների ու թագավորի փոխհարաբերությունները, որոնց IV դարում վրա հասած և գինված պայքարի վերածված ճգնաժամին նվիրված է հատուկ գլուխ։ Հետազոտված է նաև տիրող դասակարգի այլ խմբերի դրությունը՝ ազատների, ոստանիկների, հոգևորականության։

Առանձնապես կարևոր է այս գրքում, և, ինչպես ասվեց, միանգամայն նոր՝ հայ պատմագրության համար, հին Հայաստանի նյութական բարիքների արտադրողների դրության հետազոտությունը։ Այդ պրոբլեմին են նվիրված «Շինականներ» և «ռամիկներ» գլուխը և, մասամբ, «Քաղաքների բնակչությունը. արհեստավորներ և ստրուկներ» գլուխը։ Այս գլուխների շարադրության հիմքում ընկած են Մանանդյանի վերոհիշյալ աշխատությունները, բայց շատ բան էլ նորություն է։

Պատմաբանի ուշադրության կենտրոնում է եղել, բնականաբար, հին Հայաստանի նյութական բարիքներ արտադրողների հիմնական կատեգորիան՝ հողագործ բնակչությունը։ Ջանալով լուսաբանել այս հարցը, Հ. Մանանդյանը հավաքել է վաղ միջնադարի հայկական աղբյուրների

գոյոր նրան վերաբերող տեղեկությունները և քննության առել դրանք հարևան Պարսկաստանի և Բյուզանդիայի գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակի ֆոնի վրա, ընդգրկելով նաև համեմատության կարգով նյութեր Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի պատմությունից։

Հետազոտությունը բերեց Հ. Մանանդյանին երկու կարևոր եզրակացությունների։ Եթե անտեսենք այն երանգները, որոնք, հեղինակի կարծիքով, հավանորեն գոյություն ունեին Հայաստանի տարբեր մասերի գյուղական բնակչության վիճակի մեջ, ապա ընդհանուր առմամբ նրանց դրությունը կարելի է բնութագրել որպես «կիսազատ ճորտերի» դրություն։ Հեղինակի կարծիքով, այդ նշանակում է, որ գյուղացիները թեև ամրացված էին հողին, սակայն պարտավոր էին վճարել հողատիրոջը միայն տուրք, և ո՛չ կատարել նրա համար պարտադիր ծառայություններ։ Նրանք ունեին որոշ իրավունքներ։ Լինելով ճորտական կախման մեջ, նրանք կարող էին ունենալ մասնավոր սեփականություն, գլխավորապես շարժական, բայց որոշ չափով նաև անշարժ։ Իրենց սեփականությունը նրանք կարող էին կտակել, կարող էին փրկագին վճարելով լրջորդին ազատվել ճորտական կախյալ վիճակից և այլն։

Հ. Մանանդյանի երկրորդ եզրակացությունը վերաբերում է հին Հայաստանի գյուղական համայնքի պրոբլեմին։ Հենվելով Փավստոս Բուզանդի և Ագաթանգեղոսի տվյալների վրա, որոնց մեջ հիշատակված են առանձին գյուղական ընտանիքներին և գյուղական հոգևորականությանը տրամադրվող որոշակի չափի հողակտորներ, ինչպես նաև Մովսես Խորենացու այն ցուցմունքի վրա, ըստ որի հին Հայաստանում ընդունված էր հողի հավասար և ըստ մարդաթվի բաժանման կարգը, պատմաբանը եզրակացնում է, որ Հայաստանում գոյություն է ունեցել գյուղական համայնք։

«Ֆեոդալիզմը հին Հայաստանում» գրքի մեջ շոշափված է նաև մի այլ, նյութական բարիքների արտադրողներին վերաբերվող կարևոր հարց՝ հին Հայաստանում սարկության և սարկատիրության հարցը։ «Սարկությունը,— գրում է Հ. Մանանդյանը,— համատարած ու ընդհանուր մի երևույթ էր հին աշխարհում, ուստի և ինքնըստինքյան հասկանալի է, որ բացառություն չի կարող կազմել նաև հին Հայաստանը»։

Մանանդյանը այն կարծիքին էր, որ սարկությունը Հայաստանում նահապետական բնույթ էր կրում։ Իր գրքում նա ուսումնասիրում է մի շարք տերմիններ, որոնք ծառայում էին սարկական վիճակի հորջորջման համար, ինչպես նաև հին Հայաստանում սարկական ուժի հիմնական աղբյուրները, որոնք էին նրա կարծիքով պատերազմները, սարուկների վաճառքը և պարտքային սարկությունը։ Սարկական աշխատանքի օգտագործման գլխավոր ոլորտը, ըստ Հ. Մանանդյանի, տնային տնտեսությունն ու գյուղատնտեսությունն էր։

Թեև Հ. Մանանդյանի՝ հին Հայաստանում սարկության հարցի այս հետազոտությունը հետագայում օբյեկտիվորեն հանդիսացավ սովետահայ պատմագիտության մեջ նախաֆեոդալական Հայաստանի սոցիալ-տնտեսական կացութաձևի նոր կոնցեպցիայի առաջացման նախապայմաններից մեկը, այնուամենայնիվ ինքը՝ Մանանդյանը դարձավ այդ կոնցեպցիայի հակառակորդ։ Նոր տեսակետի առաջացումը սերտ կապված էր սովետական պատմագիտության նոր հայացքի հետ, ըստ որի Հին Արևելքի հասարակությունը դիտվում է որպես սարկատիրական հասարակություն։ Այս տեսակետի դրսևորումը հայ պատմագիտության մեջ միանգամայն օրինաչափական երևույթ էր, որովհետև Հայաստանն իր սկզբնական զարգացումը ապրել է հին արևելյան երկրների հետ սերտ կապի մեջ, որոշ շրջաններում էլ նրանց հետ միասին, իսկ հետագայում ընկել է հելլենիստական սարկատիրական պետությունների համակարգության մեջ։ Այս տեսակետից Հայաստանի պատմության մ. թ. ա. առաջին հազարամյակի երկրորդ կեսը և մ. թ. առաջին դարերը ընդգրկող շրջանը սարկատիրական կարգերի ժամանակ է եղել։ 1940 թ. Հ. Մանանդյանը իր «Հին Հայաստանի պատմագիտության ակտուալ խնդիրները» հոդվածով («Историк-марксист», № 6) դեմ ելավ այդ նոր տեսակետին, իսկ 1945 թ. «Հայաստանի հասարակարգի պրոբլեմը Արշակունիներից առաջ» հոդվածում («Истерические записки», հատ. 15) հանգամանորեն շարադրեց իր հայացքը այս հարցի կապակցությամբ։ «Մենք,— գրում է Հ. Մանանդյանը,— հստակորեն դիտում ենք Քսենոֆոնի շրջանի առհմատիրական կարգերից անցումը դեպի Արշակունիների շրջանի նախարարական (այսինքն՝ ֆեոդալական — Գ. Ս.) կարգերը, մի կողմ թողնելով սարկատիրական փուլը»։

Այս հոդվածով Հ. Մանանդյանը զգուշացնում է Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգերի և անտիկ՝ հունական և հռոմեական հասարակությունների սարկատիրական կարգերի մեխանիկական նույնացումից։ Մասնավորապես, նա անթույլատրելի է համարում հին հայկական մաս-

նավոր տնտեսությունների՝ ագարակների ու դաստակերտների նույնացումը լատիֆունդիաների հետ։ Նա կարծում է նույնպես, որ հիերոդուլներին (տաճարային ստրուկներին), որոնք աշխատում էին հին Հայաստանի տաճարային տնտեսություններում, «չի կարելի համարել ստրուկներ բառի բուն իմաստով»։ Դառնալով քաղաքների հարցին, Հ. Մանանդյանը համարում է, որ հին հայկական քաղաքները՝ Տիգրանակերտը, Արտաշատը և մյուսները, չի կարելի հավասարեցնել հին հունական քաղաք-պետություններին։ Վերջապես Հ. Մանանդյանը մատնացույց է անում, որ ի տարբերություն հռոմեական կամ հունական իրականության, Հայաստանում արտադրության մեջ հիմնական դերը պատկանում էր համայնական գյուղացիներին։

Բոլոր այս նախազգուշացումները նպատակ ունեին զերծ պահել սովետահայ պատմագիտությունը պատմական պրոցեսի ըմբռնման վուլգարիզացիայից։ Միևնույն ժամանակ, սակայն, ակնհայտ է, որ թեև Հ. Մանանդյանը սուբյեկտիվորեն ընդհանրապես ժխտում էր Հայաստանում ստրկատիրական կարգերի ապրելության հնարավորությունը, այնուամենայնիվ, նրա տվյալ կոնկրետ առարկությունները տեղին կլինեին միայն այն ենթադրության դեմ, թե Հայաստանում գոյություն է ունեցել հենց հունական կամ հռոմեական տիպի ստրկատիրություն, և կորցնում են իրենց ուժը, եթե խոսքը գնում է հին արևելյան տիպի ստրկատիրական հասարակության մասին։ Ճիշտ է, որ ագարակները ու դաստակերտները չի կարելի համեմատել լատիֆունդիաների հետ, որովհետև վերջիններիս ստեղծվել են հռոմեական ստրկատիրության որոշ սպեցիֆիկ պայմանների հետևանքով, որոնք հատուկ չէին ոչ միայն բպմաթիվ հին արևելյան երկրներին, այլև, ի դեպ, կլասիկ Հունաստանին, որտեղ և, այդ պատճառով, լատիֆունդիաներ չենք գտնում։ Դրանով սակայն չի բացառվում Հայաստանում այլ տիպի ստրկատիրական տնտեսությունների գոյությունը, և աղբյուրները որոշակի տեղեկություններ են տալիս նրանց առկայության մասին։ Ճիշտ է նույնպես, որ հիերոդուլներին չի կարելի համարել «իսկական» ստրուկներ, եթե վերջիններիս տեսնել, ինչպես Հ. Մանանդյանը, միմիայն անտիկ տիպի ստրուկների մեջ։ Բայց չէ որ հին աշխարհը, մասնավորապես Հին Արևելքը գիտեր ստրկության և այլ ձևեր, ու դրանց թվում արտադրողների այնպիսի տարածված կատեգորիա, որպիսին էին հողի վրա բնակեցված ստրուկները։ Սրանց էին հարում իրենց վիճակով հայկական տաճարային տնտեսությունների հիերոդուլները։ Այնուհետև, հին հայկական քաղաքները, իհարկե, չի կարելի համեմատել հին հունական կլասիկ քաղաք-պետությունների հետ։ Սակայն փաստերը ցույց են տալիս, որ այդ քաղաքները իրենցից ներկայացնում էին հին արևելյան ստրկատիրական քաղաքային համայնքների տիպերից մեկը, որը կրել է հելլենիստական պոլիսի էական ազդեցությունը։ Վերջապես, ճիշտ է նաև այն, որ գյուղական համայնքը համարյա թե ոչ մի դեր չի կատարել արտադրության մեջ հին Հունաստանում կամ հին Հռոմում, որովհետև այն բայբայվել է շատ վաղ, ստրկատիրական հասարակության զարգացման սկզբնական փուլերում։ Սակայն աներկբայելի է գյուղական համայնքի հսկայական նշանակությունը Հին Արևելքի ստրկատիրական երկրների պատմության մեջ, նրա ամբողջ տեղության ընթացքում։

Հ. Մանանդյանի քննարկված հոդվածը որոշ ազդեցություն գործեց հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգերի պրոբլեմի հետագա մշակման ընթացքի վրա այն իմաստով, որ սրեց պատմաբանների ուշադրությունը Հին Արևելքի պատմության խորքերը հասնող և այնուհետև հելլենիստական երկրների հզոր ազդեցության տակ ընթացող նրա պատմական զարգացման առանձնահատկությունների հետազոտման և նրա սպեցիֆիկ տեղական գծերի բացահայտման ուղղությամբ։

Հ. Մանանդյանի՝ Հայաստանի պատմության սոցիալ-տնտեսական պրոբլեմների հետազոտմանը նվիրված ուսումնասիրությունները սովետահայ պատմագիտության կարևոր ու անհրաժեշտ փուլերից մեկն են հանդիսանում։

Նույնքան նշանակալից է նրա ներդրումը Հայաստանի քաղաքական պատմության ուսումնասիրման գործում։ Հ. Մանանդյանը այդ բնագավառը ոգի է կոխել դեռևս 20-ական թվականների սկզբին, երբ նա սկսեց ավանդել Հայաստանի պատմության դասընթացը Երևանի համալսարանում, բայց ամենաարդյունավետ շրջանը այս տեսակետից 30-ական թվականների վերջը և 40-ական թվականներն էին։ Առաջին նրա խոշոր աշխատությունը, նվիրված մեր ժողովրդի պատմության հանգուցային կետերից մեկին, «Տիգրան Բ և Հռոմը» մենագրությունն էր (1940)։

Ի՞նչը դրդեց Հ. Մանանդյանին դառնալ այդ թեմային։ Մ. թ. ա. I դարի առաջին տասնամյակները Մեծ Հայքի պետության համար արտաքին լայն նվաճումների շրջան էին, նվա-

Հումներ, որոնք դարձրին Հայաստանը Առաջավոր Ասիայի և Միջերկրածովյան երկրների խոշորագույն տերություններից մեկը։ Հայաստանի ուժեղացումն այն ժամանակ կենտրոնացրեց իր վրա անտիկ պատմիչների ուշադրությունը, և դրա հետևանքով Տիգրան Բ-ի իշխանության ժամանակաշրջանի մասին (95—56 թթ. մ. թ. ա.) հունական և հռոմեական պատմիչները պահպանել են ավելի տեղեկություններ, քան նրանք պահպանել են Հայաստանի պատմության որևէ այլ շրջանի մասին։ Անտիկ պատմագիտության հետաքրքրությունը (որը հաճախ թշնամական բնույթ էր կրում) ժառանգել է նաև եվրոպական պատմագիտությունը, որի համար սակայն սովորական էր դարձել այդ շրջանի հայկական պետության միջազգային նշանակության անտեսումը և Տիգրան Բ-ին աննշան դեմք համարելը։ Նրան, ճիշտ է, պատահաբար հաջողվեց կցկցել քաղաքական մի խոշոր միավորում, բայց նա սոսկ մի գործիք էր իր դաշնակից Միհրդատ Եվպատորի ձեռքում և, որպես այդպիսին, գործում էր Հռոմի իրրև թե առաջադիմություն և քաղաքակրթություն տարածող առաքելությունը դեմ Արևելքում։ Արտահայտված լինելով այնպիսի հեղինակավոր բուրժուական գիտնականների կողմից, որպիսիք էին Թ. Մոմզենը և Թ. Ռեյնարը, նման հայացքները երկար ժամանակ տիրապետում էին գիտության մեջ, չնայած իրենց եվրոպոցենտրիստական, հակագիտական բնույթին։ Այդ տեսակետի հակապատմական բնույթը դրսևորվում է այն բանում, որ նա կտրում է, մի կողմից, Հայաստանի՝ Տիգրան Բ-ի շրջանի պատմությունը երկրի նախորդող պատմական զարգացման պրոցեսից, իսկ մյուս կողմից՝ Տիգրանի գործունեությունը և՛ ռազմի, և՛ կուլտուրայի, և՛ տնտեսության բնագավառում՝ հելլենիստական տրադիցիաներից, որոնցով այն սողորված էր, և համարում Տիգրանին մի «բարբարոս», որի բոլոր մտադրություններն ու ցանկությունները միայն բռնապետական մոլուցք էին։

Այս տեսակետի դեմ էր, որ ելավ Հ. Մանանդյանը իր մենագրությամբ. նորից ու մանրակրկիտ ուսումնասիրելով առկա պատմական ավյալները, նա կարողացավ տալ դրանց իսկական մի նոր լուսաբանություն, որը, եթե աչքաթող անենք, որպես բանակովի հետևանք, Տիգրանի անձի՝ մի քանի տեղում սպրդած որոշ իդեալականացման մոմենտները, հիմնականում համոզիչ է։

Մասնավորապես, գրքի մեջ ցույց է տրված, որ Հայաստանի զարգացումն ու ուժեղացումը, հատկապես նաև հելլենիստական տրադիցիաների ներթափանցումն ու հելլենիստական տիպի քաղաքների առաջացումը սկսվել էր Տիգրանից շատ առաջ և նրա օրոք տեղի էր ունենում այդ պրոցեսների լոկ հերթական փուլը։ Ցույց է տրված, որ Տիգրանի պայքարն ընդդեմ Հռոմի ոչ թե ռեակցիա էր Հռոմի քաղաքակրթական ազդեցության դեմ, այլ, ընդհակառակը, հելլենիստական աշխարհի նվաճումների պաշտպանություն։ Ցույց է տրված նաև նրա արտաքին քաղաքականության ինքնուրույն բնույթը։ Վերջապես նոր լուսաբանություն է տրված նաև հայ-հռոմեական պատերազմների ամբողջ ընթացքին։ Ամենևին չցանկանալով պնդել, թե այս շրջանի պատմության մեջ մութ ու վիճելի հարցեր այլևս չկան, մենք պետք է նշենք, որ այն, առաջին անգամ մենագրական ուսումնասիրության ենթարկված, հանդես եկավ Հ. Մանանդյանի գրքում միանգամայն նոր լույսի ներքո։

«Տիգրան Բ և Հռոմը» մենագրությունից հետո Հ. Մանանդյանը ձեռնամուխ եղավ իր «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր աշխատության ստեղծմանը։ «Քննական տեսությունը» հանդիսանում է հայ ժողովրդի հին և միջին դարերի պատմության նորագույն ծավալուն սիստեմատիկ շարադրանքը և անհրաժեշտ ձեռնարկ է յուրաքանչյուր հայագետի համար։ Նրա առանձնահատուկ արժեքը կայանում է այն բանում, որ Հ. Մանանդյանը այստեղ իր ուշադրությունը կենտրոնացրել է այն շրջանների ու պրոբլեմների վրա, որոնց ուսումնասիրությունը նրանից առաջ այս կամ այն պատճառով թերի էր մնացել։

Առաջին հատորում (1945) ընդգրկված է հայ ժողովրդի պատմությունը նրա ծագումից մինչև Արշակունյաց հարստության սկիզբը։ Այդ հատորում պետք է հիշատակել մեդ-պարսկական շրջանի պատմության հետազոտությունը (VI—IV դդ. մ. թ. ա.), մասնավորապես Քսենոփոնի տվյալների օգնությամբ։ Նրա «Կիրոպեդիա» աշխատությունը, որը մինչև այժմ դիտվում էր որպես գրական հուշարձան, գտավ Հ. Մանանդյանի աշխատության մեջ նոր արժեքավորում. Մանանդյանը ստիպեց նրան խոսել որպես պատմական աղբյուր և, հիմնվելով այդ տվյալների վրա, ինչպես նաև Մովսես Խորենացու տեղեկությունների վրա, շարադրեց մեդական շրջանի վերջի և պարսկական շրջանի սկզբի Հայաստանի պատմությունը։

Տիգրան Բ-ի էպոխայի մասին կարելի է ավելացնել, որ այստեղ հեղինակը էլ ավելի օրգանական կապ հաստատեց այդ ժամանակաշրջանի և նրան նախորդող ու հաջորդող շրջան-

ների պատմության միջև։ Կարելի էր հիշատակել նաև հատորի այլ բաժինները, որտեղ Մանանդյանը իր նոր խոսքն է ասել, միշտ հիմնվելով փաստերի մանրակրկիտ ուսումնասիրության վրա։ Դժբախտաբար առաջին հատորում իր պատշաճ տեղը չի գրավել Ուրարտուի պատմությունը, չնայած այն հսկայական դերին, որ կատարել է այդ պետությունը հայերի ձևավորման և նախնական զարգացման ընթացքում։

Երկրորդ հատորի առաջին մասը (հրատարակված հեղինակի մահվանից հետո 1956 թ.) նվիրված է Արշակունյաց հարստության իշխանության ժամանակաշրջանին (66—428 թթ.)։ Այստեղ պետք է հիշատակել II և, մանավանդ, III դարի Հայաստանի պատմության ուսումնասիրությունը, մի շրջան, որ հատկապես վատ է լուսավորված սկզբնաղբյուրներով, և կարծես ջրբաժան գիծ լինի աղբյուրների երկու խմբերի համար. հունա-հռոմեական աղբյուրները արդեն շատ մակերեսորեն են շոշափում այն, իսկ հայկականները՝ դեռևս շատ թույլ։ Այնուամենայնիվ Հ. Մանանդյանին հաջողվել է տեղեկությունների նոր ուսումնասիրության հիման վրա տալ այդ ժամանակաշրջանի պատմության կապակցված շարադրությունը։ Մեծ հետազոտական աշխատանք է տարված նաև հատորի այլ բաժիններում։

Երկրորդ հատորի երկրորդ մասը, որը պետք է ընդգրկեր V—X դդ. պատմությունը, դժբախտաբար բացակայում է։ Վերջին, երրորդ հատորը (հրատարակված հեղինակի մահվանից հետո, 1952 թ.) պարունակում է Հայաստանի պատմությունը XI—XV դարերում։ Եթե «Քննական տեսության» նախորդ երկու գրքերում շարադրված են պատմության այնպիսի շրջաններ, որոնք ներկայացվել են Մանանդյանից առաջ նաև այլ կապիտալ աշխատությունների մեջ, ապա երրորդ հատորը, Չամչյանից հետո, առաջին ընդհանրացնող աշխատությունն է հիշյալ չորս դարերի քաղաքական պատմության գծով։

Թեև «Քննական տեսությունը» նվիրված է գերազանցապես Հայաստանի քաղաքական պատմությանը, բայց և այնպես որոշ իմաստով կարող է համարվել Հ. Մանանդյանի բազմամյա և բեղմնավոր գործունեության հանրագումարը պատմության ու բանասիրության տարբեր բնագավառներում, գործունեություն, որի հիմնական ուղղությունները մենք ջանացինք ցուցադրել ներկա համառոտ ակնարկում։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի հետազոտական նվաճումների մեծ մասը մինչև այսօր էլ պահպանում է իր գիտական արժեքը։ Դառնալով սակայն և այն դեպքերին, որտեղ սովետական պատմագիտությունը իր զարգացման ընթացքում հեռացել է մեծ գիտնականի տեսակետներից ու հայացքներից, մենք պետք է հիշենք վերջինների պատմագիտական արժեքը, հիշենք, որ Հ. Մանանդյանը առաջինն էր, որ լուրջ կերպով հետաքրքրվեց հին Հայաստանի պատմության սոցիալ-տնտեսական բովանդակությամբ և ձեռնարկեց պատմության իրական կերտողների՝ աշխատավոր մասսաների վիճակի հատուկ ուսումնասիրությանը, որով և ճանապարհ բացեց հին Հայաստանի պատմության մարքսիստական ուսումնասիրման համար։

ЯКОВ АМАЗАСПОВИЧ МАНАНДЯН

Г. Х. САРКИСЯН

(Р е з ю м е)

Судьба академика Якова Амазасповича Манандяна (1873—1952) показательна для армянской интеллигенции его поколения. С энтузиазмом вступив на поприще науки в конце прошлого века и создав ряд трудов, ученый через несколько лет был вынужден прекратить свою научную деятельность, чтобы добывать средства к существованию работой в области юриспруденции. Советская власть дала ему возможность вновь заговорить, после десятилетнего молчания, языком своих научных трудов, применить к делу свое блестящее образование (он окончил три университета — Иенский, Петербургский и Тартуский), по-настоящему развернуть свои возможности.

Я. А. Манандян начал свою научную деятельность как филолог. Основным объектом его исследований в этой области явились памятники так называемой армянской

грекофильской школы, представители которой проделали огромную работу по переводу творений выдающихся древнегреческих и византийских авторов, а также трудов, посвященных их истолкованию, на древнеармянский язык. Я. А. Манандян издал ряд текстов грекофильской школы и создал блестящую монографию, посвященную определению сущности этой школы и этапов ее развития в течение VI—VII вв.

В 20—30-х годах Я. А. Манандян широко развернул творческую деятельность в новой не только для него, но и почти не разрабатывавшейся до него области социально-экономической истории Армении. Серия его замечательных этюдов завершилась изданием обобщающей монографии об армянском феодализме. Параллельно он занимался и вспомогательными историческими дисциплинами: исторической географией Армении, исторической метрологией, нумизматикой и т. д. Он написал также ценное исследование о торговле и городах исторической Армении.

40-е годы знаменуются новым творческим взлетом маститого ученого. Его мысль обращается теперь к проблемам политической истории Армении. Он издает превосходную монографию об эпохе Тиграна II, затем, вооруженный обширными энциклопедическими знаниями и результатами своих предшествующих исследований, создает многотомный «Критический обзор истории армянского народа», охватывающий период с древнейших времен до XV в. и являющийся настольной книгой каждого армениста, в качестве новейшего развернутого систематического изложения древней и средневековой истории Армении. К сожалению, Я. А. Манандян не успел написать раздел, относящийся к V—X вв.

Подавляющее большинство исследовательских достижений Я. А. Манандяна сохраняет свою научную актуальность по сей день. Однако, обращаясь и к тем случаям, в которых советская историческая наука в своем развитии отошла от взглядов и точек зрения маститого ученого, следует помнить об их историографической ценности, помнить, что Я. А. Манандян был первым, кто всерьез заинтересовался социально-экономическим содержанием истории древней Армении и предпринял специальное исследование положения подлинных творцов истории — трудящихся масс.